**Գիտական խորհրդի նիստ 27.08.2020թ.**

1. 2020-2021 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Համալսարանի վաստակաշատ որոշ աշխատակիցներին պարգևատրելու, Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչում շնորհելու համար երաշխավորելու մասին:
3. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Համալսարանում ուսումնական գործընթացը համավարակի պայմաններում 2020թ. սեպտեմբերի 1-ից կազմակերպվելու է հիբրիդային եղանակով: Ընթացիկ կիսամյակի համար ամբիոնները պարտադիր պետք է ունենան դասընթացների առցանց կազմակերպման վերանայված էլեկտրոնային տարբերակները: Ընդգծվեց յուրաքանչյուր անձի (ուսանող, թե աշխատող) պատասխանատվությունը և համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման սահմանված կարգի անվերապահ կատարումը:
2. Ծննդյան հոբելյանի կապակցությամբ պարգևատրվեցին՝ Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր, գիտության և տեխնիկայի գծով վաստակավոր գործիչ Ա.Մ. Բարխուդարյանը երկարամյա գիտամանկավարժական և վարչական բարեխիղճ ու արդյունավետ գործունեության համար և ծննդյան 80-ամյա հոբելյանի կապակցությամբ պարգևատրվեց երկու ամսվա աշխատավարձի չափով, Համալսարանի դիզայնի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, Հայաստանի դիզայներների միության նախագահ Ա.Մ. Բաղդասարյանը դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառում ունեցած վաստակի, ստեղծագործող սերնդի դաստիարակության, դիզայն մասնագետների թողարկման գործում ներդրած ավանդի և ծննդյան 75-ամյակի կապակցությամբ պարգևատրվեց Համալսարանի ոսկե մեդալով: